Պարոն Հայկ Ղոսալմյանին

ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

_____

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

_____

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա.Սաֆարյանին

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

*Ա.Սաֆարյան*_____

«15»_____04_____2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի ապրիլի 9-10-ը Մոլդովայի Քիշնև քաղաքում կայացած «Արևելյան գործընկերության երկրներում մաքուր էներգիայի անցման խթանում» ծրագրի շրջանակում «Բաշխման համակարգի օպերատորների դերերի վերաբերյալ» տարածաշրջանային աշխատաժողովին մասնակցություն

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը – Անժելա Առաքելյան:

2.Զբաղեցրած պաշտոնը – ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության դիմումների քննարկման բաժնի պետ:

3.Գործուղման վայրը և ժամկետները – Մոլդովա, Քիշնև, 2025 թվականի ապրիլի 9-10-ը:

4.Հրավիրող կողմը – Եվրամիության էներգետիկ համագործակցության EU4Energy միավորում:

5.Գործուղման նպատակը – Մասնակցություն բաշխողի նոր դերը մաքուր էներգիայի փաթեթի շրջանակներում խորագրով աշխատաժողովում:

6.Քննարկված թեմաները (հարցերը) –

- Եվրոպական երկրներում մաքուր էներգետիկայի զարգացումը և զարգացող երկրներում ներկայիս իրավիճակը,
- Կանաչ էներգետիկայում սակագնային կարգավորումը,

- Պահանջարկի բավարարման մեխանիզմները՝ Եվրոպական բաշխողների միության օրինակով,
- Խելացի հաշվիչներ:

09.04.2025թ.

Բացման խոսքից հետո մի քանի փորձագետներ ներկայացրեցին իրենց տեսլականները և փորձը՝ կանաչ էներգետիկայի զարգացման ոլորտի վերաբերյալ, մասնավորապես՝ ներկայացվեց «Մաքուր էներգիայի փաթեթի շրջանակներում Բաշխիչ Ցանցի Օպերատորի (DSO) նոր դերերի ամփոփում» խորագրով պրեզենտացիան, որից հետո ներկայացվեց «Սակագներ, որոնք հնարավորություն են տալիս կատարել արդյունավետ ցանցային միացում և օգտագործում՝ կենտրոնանալով վերականգնվող էներգիայի աղբյուրների, գեներացիայի և մարտկոցների վրա»: Այնուհետև փորձագետը կիսվեց օրինակներով՝ Եվրոպական զարգացած երկրներում առկա իրավիճակի մասին:

Օրվա ավարտին ներկայացվեցին Եվրոպական միության շրջանակներում բաշխիչ ցանցի օպերատորների (DSO) մակարդակում իրականացված ճկունության շուկաների և պահանջարկի արձագանքման մեխանիզմների օրինակներ:

Օրն ամփոփվեց հարց ու պատասխաններով:

10.04.2025թ.

Շվեդիայի օրինակի վրա մանրամասն ներկայացվեցին բաշխողի գործառույթները կանաչ էներգիայի կառավարման ոլորտում, խելացի հաշվիչների դերը բաշխողի մոտ, ինչպես նաև միասնական կառավարման ծրագրի կիրառումը:

Վերը նշվածից հետո յուրաքանչյուր երկիր ելույթի և կարճ պրեզենտացիայի միջոցով ներկայացրեց բաշխման ցանցի օպերատորին, իր գործառույթները, զարգացման ուղիները և երկրում կանաչ էներգետիակյի մասով առկա իրավիճակը:

Օրն ամփոփվեց հարց ու պատասխաններով:

7.Հանդիպումները, ելույթները.–

Երկօրյա աշխատաժողովի ժամանակ հանդիպել ենք Մոլդովայի, Վրաստանի, Ուկրաինայի, Բելառուսի Հանրապետության և Հյուսիսային Մակեդենիայի բաշխման ցանցի ներկայացուցիչներին:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը –

Երկրների համագործակցությունը պահպանելու, երկրներում տեղի ունեցող զարգացումներին ու փոփոխություններին ծանոթանալու, ինչպես նաև արդյունավետ փորձի փոխանակման համար պայմանավորվածություն է ձեռք բերվել կապը պահպանել նաև էլեկտրոնային տարբերակով: Հանդիպման ժամանակ որևէ փաստաթուղթ չի ստորագրվել, սակայն կազմակերպող կողմը առաջարկել է խորացնել աշխատաժողովի ընթացքում ձեռք բերված գիտելիքները հաջորդ անգամ՝ այլ ֆորմատով:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները-

Աշխատանքային պլանի քննարկման արդյունքում որոշվել է՝ շարունակել համագործակցությունը էլեկտրոնային տարբերակով, ներկայացնել հաջորդ հանդիպումների թեմաների համառոտ նկարագրություն:

Գործուղվող ---------- 15.04.2025 ----------
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N
1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով__

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 200-ԳՔ, 24.03.2025թ**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության դիմումների քննարկման բաժնի պետ՝ **Անժելա Արաքելյանին**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.Քիշնև **/Մոլդովա/**

5. Գործուղման ժամկետները **08.04.2025-11.04.2025 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ**, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, **օրապահիկ** և այլն)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անժելա Առաքելյան	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար- հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով դոլար)	59	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	23,116	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	92,465	92.465
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար	14,653	14.653
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		107,118	107.118

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 16. 04.2025թ.